



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի օգոստոսին (վերլուծություն)

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 16718 գործարք, որոնց քանակը 2017 թվականի հուլիս ամսվա համեմատ աճել է 11.1 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 11.2 %-ով:

2017 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4842 օտարման գործարքի 74.3 %-ը կազմել է առուվաճառքը, 25.4 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 38.0 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի օգոստոսին, 2017 թվականի հուլիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքն աճել է 16.0 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 10.3 %-ով:

2017 թվականի օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.6 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի օգոստոսին, 2017 թվականի հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.3 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 9.9 %-ով:

2017 թվականի օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	օգոստոս 2016 թ.	օգոստոս 2017 թ.	հուլիս 2017 թ.
<b>Կենտրոն</b>	428250	452800	452800
<b>Արաբկիր</b>	357350	342500	342500
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	283150	266500	268000
<b>Նոր Նորք</b>	254250	229200	230000
<b>Ավան</b>	261800	247000	248000
<b>Էրեբունի</b>	252350	236000	237000
<b>Շենգավիթ</b>	257700	240000	240000
<b>Դավթաշեն</b>	276850	251500	250000
<b>Աջափնյակ</b>	251100	226250	226250
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	244200	230000	230000
<b>Նուբարաշեն</b>	157450	156000	156000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի օգոստոսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի հուլիսի համեմատ՝ նվազել է 0.1%-ով:

2017 թվականի օգոստոսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 459 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի հուլիսի համեմատ աճել է 40.4 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 19.9 %-ով:

2017 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	-----------------------

		օգոստոս 2016 թ.	օգոստոս 2017 թ.	հուլիս 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116050	105000	105000
	Ապարան	58500	59000	59000
	Թալին	66850	62000	62000
Արարատ	Արտաշատ	98900	91000	91000
	Մասիս	115800	99850	100000
	Վեդի	101750	90000	90000
	Արարատ	77550	77850	77850
Արմավիր	Վաղարշապատ	154200	120000	122000
	Արմավիր	121250	92000	92000
	Մեծամոր	87600	70000	70000
Գեղարքունիք	Սևան	99400	79100	80000
	Գավառ	60600	52000	53000
	Մարտունի	107700	108000	110000
	Վարդենիս	45300	46100	46100
	Ճամբարակ	28750	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	81000	82000
	Ստեփանավան	74750	66000	68000
	Սպիտակ	99850	88800	89000
	Ալավերդի	55900	49500	50000
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	30000	30000
Կոտայք	Աբովյան	155150	148200	148200
	Նոր Հաճն	128550	120000	120000
	Բյուրեղավան	108250	92300	92300
	Եղվարդ	109900	106700	106700
	Հրազդան	63900	56000	56000
	Ծաղկաձոր	292400	288000	288000
	Չարենցավան	85500	73000	73000
Շիրակ	Գյումրի	109450	88000	89000
	Արթիկ	67400	67600	67600
	Մարալիկ	41150	42300	42300
Սյունիք	Գորիս	123850	125000	124100
	Կապան	95350	95300	95300
	Սիսիան	92200	89000	89000
	Մեղրի	83200	90000	90000
	Քաջարան	94950	98600	98300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	92000	92000
	Եղեգնաձոր	126350	120400	120400
	Ջերմուկ	113300	99000	99000
Տավուշ	Դիլիջան	115600	111200	111200
	Իջևան	118550	110850	110850
	Բերդ	60450	62000	62000
	Նոյեմբերյան	50400	51000	51000
	Այրում	31900	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի հուլիսի համեմատ՝ նվազել է 0.2%-ով:

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 464 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան

քաղաքում՝ 146 գործարք, մարզերում՝ 318 գործարք: 2017 թվականի օգոստոսին, 2017 թվականի հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն աճել է 23.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 14.1 %-ով, իսկ մարզերում՝ 28.7 %-ով: 2017 թվականի օգոստոսին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ 36.4 %-ով, իսկ մարզերում՝ 11.6 %-ով:

2017 թվականի օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	օգոստոս 2016 թ.	օգոստոս 2017 թ.	հուլիս 2017 թ.
Կենտրոն	476350	476000	476000
Արաբկիր	383200	380000	380000
Քանաքեռ-Զեյթուն	295000	283100	283100
Նորք-Մարաշ	319300	300000	300000
Ավան	270600	262000	262000
Էրեբունի	239750	234130	234130
Շենգավիթ	255000	230000	230000
Դավթաշեն	276100	268050	268050
Աջափնյակ	250100	240000	240000
Մալաթիա-Սեբաստիա	238100	234000	234000
Նուբարաշեն	150800	150000	150000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի օգոստոսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի հուլիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2017 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		օգոստոս 2016 թ.	օգոստոս 2017 թ.	հուլիս 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136250	130000	130000
	Ապարան	60050	51000	51000
	Թալին	69250	66000	66000
Արարատ	Արտաշատ	100100	97000	97000
	Մասիս	115100	110100	110100
	Վեդի	102300	90600	90600
	Արարատ	88000	88000	88000

Արմավիր	Վաղարշապատ	153150	149000	149000
	Արմավիր	107000	99950	99950
Գեղարքունիք	Սևան	94950	92950	92950
	Գավառ	57100	54100	54100
	Մարտունի	96200	95000	95000
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	32000	32000
	Վանաձոր	100900	98600	98600
Լոռի	Ստեփանավան	91200	82800	82800
	Սպիտակ	114050	108000	108000
	Ալավերդի	50300	50500	50500
	Տաշիր	51900	45000	45000
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
	Աբովյան	157350	155200	155200
Կոտայք	Նոր Հաճն	129800	126000	126000
	Բյուրեղավան	120500	110000	110000
	Եղվարդ	116100	109000	109000
	Հրազդան	82600	71000	71000
	Ծաղկաձոր	305000	300000	300000
	Չարենցավան	83000	80000	80000
	Գյումրի	119250	116000	116000
Շիրակ	Արթիկ	63450	60400	60400
	Մարալիկ	52000	52000	52000
	Գորիս	130050	128000	128000
Սյունիք	Կապան	100750	100600	100600
	Սիսիան	96500	95000	95000
	Մեղրի	84650	88000	88000
	Դաստակերտ	11610	11810	11810
	Վայք	90150	88100	88100
Վայոց ձոր	Եղեգնաձոր	116750	114000	114000
	Ջերմուկ	131300	129000	129000
	Դիլիջան	115650	115000	115000
Տավուշ	Իջևան	123250	120200	120200
	Բերդ	60100	57000	57000
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի հուլիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի օգոստոսին հանրապետությունում օտարվել է 1636 միավոր (862.97 հա) հող, որից Երևանում՝ 107 միավոր (23.83 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 873 միավոր (775.20 հա), որից Երևանում՝ 25 միավոր (10.34 հա),

- բնակելի կառուցապատման հող՝ 549 միավոր (44.63 հա), որից Երևանում՝ 43 միավոր (1.88 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 168 միավոր (12.56 հա), որից Երևանում՝ 33 միավոր (3.07 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 31 միավոր (24.19 հա), որից Երևանում՝ 6 միավոր (8.54 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 4 միավոր (1.43 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 11 միավոր (4.96 հա) մակերեսով:

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում օտարված հողերից 1357 միավորի (763.97 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 80 միավոր (19.70 հա), նվիրատվության գործարք՝ 270 միավորի (94.23 հա), որից Երևանում՝ 27 միավոր (4.13 հա) և փոխանակության գործարք՝ 9 միավորի (4.77 հա):

Հանրապետությունում 2017 թվականի օգոստոսին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 23.6 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 23.4 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 26.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 93.8 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 190.02 հա, որից 185.36 հա գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 29.8 %-ը կամ 404 միավորը (311.91 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 19 միավոր (0.30 հա), իսկ 68.8 %-ը կամ 934 միավորը (450.20 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 59 միավոր (19.15 հա): 2017 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 19 գործարք /1.86 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2017 թվականի օգոստոսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	0	0.00	6	0.09	13	0.21	12	6.74	6	8.54	22	1.07	19	2.80
Արագածոտն	16	98.10	1	0.11	8	0.63	9	0.52	110	87.26	1	0.005	26	3.09	1	0.18

Արարատ	10	7.18	1	0.41	5	0.17	13	0.13	93	45.78	2	0.06	54	4.59	6	0.42
Արմավիր	11	91.66	1	0.22	1	0.003	3	0.03	80	69.81	1	0.51	58	5.79	4	0.04
Գեղարքունիք	20	12.78	3	1.00	18	1.67	8	2.17	55	29.97	2	0.09	16	1.51	3	0.10
Լոռի	7	1.47	1	0.16	8	0.14	17	0.79	38	31.47	0	0.00	8	0.67	3	0.05
Կոտայք	39	52.68	5	0.52	96	6.95	20	1.50	121	62.95	0	0.00	56	4.80	3	0.07
Շիրակ	2	1.12	1	10.00	5	0.06	6	0.19	37	32.79	0	0.00	10	0.48	1	0.02
Սյունիք	2	0.48	2	0.95	3	0.01	1	0.09	28	29.22	2	1.27	17	1.40	4	0.05
Վայոց ձոր	15	10.62	0	0.00	0	0.00	0	0.00	3	10.57	0	0.00	9	0.61	5	0.06
Տավուշ	4	1.87	2	0.35	6	0.34	5	0.04	7	4.20	0	0.00	9	0.98	2	0.16
<b>Ընդամենը</b>	<b>126</b>	<b>277.96</b>	<b>17</b>	<b>13.72</b>	<b>156</b>	<b>10.06</b>	<b>95</b>	<b>5.67</b>	<b>584</b>	<b>410.76</b>	<b>14</b>	<b>10.48</b>	<b>285</b>	<b>24.99</b>	<b>51</b>	<b>3.95</b>

Ստորև ներկայացված է 2017 թվականի օգոստոսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	11	0.11	0	0.00	4	0.05	7	0.06	8	0.19	0	0.00	0	0.00	2	0.04	6	0.15
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	34	99.37	16	98.10	1	0.11	8	0.63	9	0.53
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	27	4.87	8	4.16	1	0.41	5	0.17	13	0.13
Արմավիր	2	0.004	0	0.00	1	0.003	1	0.001	14	91.91	11	91.66	1	0.22	0	0.00	2	0.03
Գեղարքունիք	4	0.09	1	0.01	3	0.08	0	0.00	45	17.53	20	12.78	2	0.99	15	1.59	8	2.17
Լոռի	10	0.15	0	0.00	4	0.13	6	0.02	23	2.42	7	1.47	1	0.16	4	0.01	11	0.78
Կոտայք	11	0.364	0	0.00	9	0.36	2	0.004	149	61.28	39	52.68	5	0.52	87	6.59	18	1.49
Շիրակ	5	0.18	0	0.00	1	0.01	4	0.17	9	11.19	2	1.12	1	10.00	4	0.05	2	0.02
Սյունիք	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	7	1.53	2	0.48	2	0.95	2	0.01	1	0.09
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	10.63	15	10.63	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	2	0.13	0	0.00	2	0.13	0	0.00	14	2.44	3	1.83	2	0.35	4	0.22	5	0.04
<b>Ընդամենը</b>	<b>46</b>	<b>1.03</b>	<b>1</b>	<b>0.01</b>	<b>25</b>	<b>0.77</b>	<b>20</b>	<b>0.26</b>	<b>345</b>	<b>303.36</b>	<b>123</b>	<b>274.91</b>	<b>16</b>	<b>13.71</b>	<b>131</b>	<b>9.31</b>	<b>75</b>	<b>5.43</b>

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք (3.06 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի օգոստոսին, 2016 թվականի օգոստոսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 46.3 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 60.0 %-ով, իսկ մարզերում՝ 46.0 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 23.0 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 98.5 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 23.0 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 60.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի օգոստոսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մասնավորագույն	Միջին			Նվազագույն	Մասնավորագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	9	7.81	50.4	529.7	213.6	85	57.40	365.0	12000.0	3383.0
Ապարան						4	2.46	86.5	2727.3	650.0
Թալին	7	90.29	100.4	308.0	130.4	12	11.00	93.6	5494.5	673.6
Ծաղկահովիտ						6	15.53	79.5	1000.0	436.7
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	1	4.00	155.0	155.0	155.0	35	12.32	335.1	10833.3	2694.5
Մասիս						14	5.26	200.0	11904.8	3378.0
Վեդի	7	0.16	7321.6	9121.3	8597.1	41	27.70	207.0	10795.1	1981.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	7	23.74	61.2	238.4	91.7	33	19.11	294.3	9090.0	1500.0
Բաղրամյան						15	38.93	90.6	2561.1	795.0
Վաղարշապատ	4	67.92	33.8	35.7	35.0	30	11.15	444.4	11764.7	2074.1
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						5	3.09	199.8	1875.0	535.5
Ճամբարակ	8	0.85	1170.4	1800.0	1332.6			60.5	953.3	347.0
Մարտունի	3	2.23	176.7	1591.0	1118.9			51.1	2850.0	735.0
Սևան	3	1.49	172.5	838.4	399.5	44	18.05	52.2	2134.8	365.0
Վարդենիս	6	8.20	1174.6	1750.0	1403.5	6	8.83	41.2	2575.1	355.3
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	4	0.54	2445.9	2503.2	2468.4	8	4.05	170.4	6424.2	535.2
Գուգարք								234.6	6065.9	805.6
Սպիտակ								250.0	5555.5	655.0
Ստեփանավան	3	0.93	167.8	1455.4	917.9	20	13.47	90.6	1686.6	437.8
Տաշիր						9	13.76	45.3	1384.4	187.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	23	37.41	111.5	5783.3	1172.6	61	17.87	279.3	11942.7	3918.2
Եղվարդ	13	13.96	67.5	1603.3	417.2	52	42.17	174.4	11971.8	2541.0
Հրազդան	3	1.32	95.5	434.7	224.2	6	2.46	130.5	10256.4	1117.8
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						6	5.92	252.0	1693.1	710.0
Ամասիա						2	5.44	40.9	261.0	145.0
Անի	2	1.12	88.1	305.3	196.7	7	11.63	110.6	546.9	472.0
Աշոցք								58.5	215.8	142.0
Արթիկ						12	8.35	79.4	1428.6	554.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						9	10.47	92.6	1023.2	680.0
Կապան						3	1.68	120.0	841.6	465.0
Մեղրի	1	0.25	1150.0	1150.0	1150.0	1	0.14	193.0	3000.0	860.0
Սիսիան	1	0.22	131.3	131.3	131.3	15	16.94	46.3	1977.4	512.5
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	15	10.62	65.6	944.4	307.7	3	10.57	125.0	10000.0	1870.0
Վայք								58.8	1430.7	650.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						3	0.37	213.3	3783.8	730.0
Իջևան	3	1.83	217.7	1050.0	584.4			267.5	9454.5	1655.0
Նոյեմբերյան						3	3.70	46.7	7368.4	1065.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:



Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի օգոստոսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված է են հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	2	2424.0	137.5	3254.2	1695.8	17	16388.1	130.7	22200.0	2588.2
Ապարան	5	3360.8	256.0	1344.6	696.8	3	1914.0	124.1	609.6	395.0
Թալին	1	485.0	235.0	235.0	235.0	4	8045.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	3230.0	60.0	214.3	95.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						18	16015.3	173.9	7140.3	903.0
Մասիս	5	1730.3	1970.7	3703.5	2879.0	25	18712.9	187.5	25000.0	1205.1
Վեդի						10	10135.0	126.1	5000.0	663.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						16	17670.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						1	600.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						40	38457.0	197.4	26528.4	1530.6
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						6	4576.0	186.6	1084.3	682.0
Ճամբարակ	1	1523.6	102.4	102.4	102.4	2	924.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	12	13934.0	198.0	220.0	200.0	5	5467.0	119.3	5000.0	277.0
Սևան	1	380.0	1273.2	1273.2	1273.2			240.0	3110.4	350.0
Վարդենիս	1	41.2	1470.0	1470.0	1470.0	2	3340.0	72.5	987.2	150.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						2	2130.0	114.3	1388.9	216.8
Գուգարք	4	103.5	2106.0	2106.0	2106.0	3	1698.0	77.9	14083.3	1258.3
Սպիտակ						1	660.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						2	2197.4	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	29	12233.5	621.0	9800.0	3100.0	32	26821.5	264.5	35353.5	1954.5
Եղվարդ	52	50989.7	244.2	2789.4	367.6	20	16677.0	173.6	27000.0	2855.0
Հրազդան	6	2716.0	1366.0	3333.3	2658.7	4	4515.0	117.7	34848.5	1317.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	2	485.6	1249.0	1516.5	1382.8	8	3711.0	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի								67.9	180.6	218.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	2	30.8	2750.0	2752.3	2751.1	1	850.0	111.8	5000.0	217.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						3	4480.0	112.2	1700.0	368.0
Կապան	2	110.2	2500.0	3200.0	2850.0	1	600.0	67.9	2638.9	385.0
Մեղրի						2	1160.0	68.5	632.9	270.0
Սիսիան						10	7241.0	123.5	875.0	263.8
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						8	5820.0	96.7	7659.6	507.2
Վայք						1	320.0	120.7	1448.3	250.0
<b>Տավուշի մարզ</b>										

Բերր						1	625.0	75.8	810.0	131.0
Իջևան	2	1810.5	48.9	3000.0	1524.4	8	9214.8	74.1	14423.1	470.0
Նոյեմբերյան	2	352.8	230.5	245.9	238.2			125.0	1948.1	259.0

2017 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 989 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.9 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 93.2 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի օգոստոսին, 2017 թվականի հուլիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 66.8 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 50.5 %-ով:

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 14 բնակարանի, 28 անհատական բնակելի տան, 237 հասարակական և 360 արտադրական նշանակության օբյեկտի, 345 հողի, 4 ավտոտնակի և 1 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում վարձակալված 834.24 հա հողից 0.23 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 834.01 հա հողերից 713.33 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 57.38 հա արդյունաբերական օբյեկտների, 14.78 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Գեղարքունիքի մարզում՝ 290.12 հա, որից 246.76 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2130 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 12.7 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի հուլիսի համեմատ, աճել է 15.7 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 27.9 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (49.9 %), անհատական բնակելի տների (25.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.3 %) և հողերի (8.6 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1154 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի հուլիսի համեմատ աճել է 0.5 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 17.8 %-ով:

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում գրավադրվել է 830.68 հա հող, որից 3.92 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 822.47 հա կամ 99.0 %-ը գյուղատնտեսական նշանակության, որից 1.40 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Վայոց ձորի մարզում՝ 637.70 հա, որից 637.65 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 324 գործարք: 2017 թվականի օգոստոսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի հուլիսի համեմատ, աճել է 5.2 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 92.9 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 238 գործարք, որը 2017 թվականի հուլիսի համեմատ, նվազել է 4.0 %-ով, իսկ 2016 թվականի նույն

Ժամանակահատվածի համեմատ՝ աճել 2.0 անգամ: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի հուլիսի համեմատ, աճել է 43.3 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, 75.5 %-ով:

2017 թվականի օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է 2030 առաջնային գրանցում, որոնց քանակը, 2017 թվականի հուլիսի համեմատ, աճել է 5.2 %-ով, իսկ 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ 2.3 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 12.1 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (17.8%):

**«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**